Դանիել Վարուժան

Գրգանք

Անոր որ պիտի գա…

Ափը լճակին մենավոր՝
Ուր տընակս իմ կախարդորեն շիներ եմ՝
Ձեռն ի ծընոտ ըսպասեցի իր գալուն:
Ներոենիին տերևներուն տակ բոսոր,
Նուռի մը պես ճեղքըված,
Սիրտըս, շիթ շիթ, արյուն թորեց ծունկերուս՝
Կարոտը սե՛րս արյունեց.
Եվ ամիսներ բովանդակ
Եղնիկի պես լացի գոհար արցունքներ
Ափը լճակին մենավոր:

Ու վերջապես ան եկավ
Այգիներեն քաղցրաբույր՝
Ու ողկույզներն, ըստինքներու պես լեցուն,
Հողին վրա կը կախվին,
Մոր մը գըրկեն, որ իր մազերը խարտյաշ
Ամեն առտու, ճաճանչներու պես, սանտրեց,
Շուշաններու պարտեզեն՝
Ուր տատրակներն Անմեղությո՛ւնը կ'երգեն՝
Ան վերջապես ա՛լ եկավ:

Ո՛վ վարսագեղ հովվուհիս,
Որ աղբյուրին լույսեն ծըլած խոտին մեջ,
–Գալու համար իմ սիրույս–
Լըքեց անթիվ գառնուկներն իմ մոլորուն.
Եվ զարնելով փարախին դրան քարին վրա
Խորտակեց սրինգը տոսախ
Խենթի մը պես կողկողագին ողբալեն,
Ո՛վ վարսագեղ հովվուհիս:

Երբ նես մըտավ իմ շեմես,
Ձյուն կարապներս օձաձապուկ վիզերնին
Կարկառեցին դեպ անոր,
Դեպ մարմարե իր ոտքերուն համբույրին:
Եվ շունս հըլու, փորին վըրա սողալով,
Եկավ լիզել կրունկներն անոր ադամանդ.
Ժըպիտներով աչքերը լի, վիթի պես,
Ան ներս մըտավ իմ շեմես:

Տնակըս բույրո՛վ լեցվեցավ,
Ջի ծոթրիններ ծորեցան
Պատմուճանին քըղանցքեն,
Ջի արևով օծված ոսկի մազերեն
Բուրյան մեղրեր ծորեցան.
Եվ բիբերեն՝ մարգրիտներու պես փաղփուն՝
Թափթըփեցան ասուպներ.
Տնակըս լույսո՛վ լեցվեցավ:

Մեզ գըրգարան շինեցի.
Գարնան բոլոր վարդերը գոգ գոգ բերած՝
Հարդարեցի մեր անկողինն հիմենի.
Նունուֆարներն՝ որոնց ծղոտները կակուղ
Հոտող սուրիս ներքև արյուն ծորեցին՝
Մեր գըլխուն տակ բարձ եղան.

Ծաղիկներովն հողին և ջինջ ջուրերուն,
Աղվամազով տատրակներու դունչերուն
Մեզ գրրգարան շինեցի:

Վարդերուն վրա փրրփրեցավ
Իր մերկությունն երե՛ք անգամ կաթնային,
Հընդկաստանի յուղերով
Լույսերու պես օծեցի շեկ վարսերն իր.
Եվ ծալերուն մեջ մարմինին՝ իր բոլոր
Խընկամանները քրրմորեն պարպեցի:
Ան, առաջին համբույրիս տակ խրոռված,
Օշնանի պես պրղպրջուն
Վարդերուն վրա փրրփրեցավ:

Ու քրնացավ կուրծքիս վրա…
Օ՛, մատերս իմ՝ որ ժամերով լողացին
Մազերուն մեջ հորդառատ.
Օ՛, բերանն իմ՝ որ բերնին վրա ըզգրլխիչ՝
Խրմեց սափորն իր սրրտին:
Իրար հյուսված, մենք բաղեղներ խանդակաթ.
Ծաղիկներուն միջև հեղ մ'ա՛լ ծաղկեցանք:
Ան քրնացավ կուրծքիս վրա…

Կարապներն ա՛լ թուխս նըստան.
Եղեգնուտին մեջ քամին մեղմ նըվագեց
Ծրլարձակման մեծ օրենքները Գարնան.
Նունուֆարի հոտված ծղոտները դարձյալ
Ջուրին մեջեն արձակեցին փթիթներ:
Մերին սրրտերն ունկընդիր
Իրարու մեղմ տրրոփյունին՝ նընջեցին.
Եվ լիճին խորն, աստղերուն վրա թևամփոփ,
Կարապներն ա՛լ թուխս նըստան: